

Հաստատված է  
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության  
թիվ XX/xx-30.09.2025 թ. որոշման Հավելված 1  
Վարչության նախագահ  
----- Ա. Առաքելյան

*Ուժի մեջ է մտնում 01.10.2025թ.  
Հրապարակման ամսաթիվը 30.09.2025թ.  
Անհուփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ*



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
«AEB MOBILE» /« AEB ONLINE» ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ**

ԵՐԵՎԱՆ 2025

Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաճախորդների կողմից «AEB Mobile» / «AEB Online» համակարգերում հաճախորդի գրանցման, սպասարկման ընթացակարգը և այլ պայմանները:

## Բաժին 1. Ընդհանուր հասկացություններ

- 1.1. Համակարգ՝ Բանկի «AEB Mobile» / «AEB Online» համակարգեր:
- 1.2. «AEB Mobile» համակարգ՝ շարժական սարքերի համապատասխան հավելվածի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ,
- 1.3. «AEB Online» համակարգ՝ համացանցի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ:
- 1.4. Հաճախորդ՝ ֆիզիկական (անհատ ձեռնարկատեր) կամ իրավաբանական անձ,
- 1.5. Օգտագործող՝ Հաճախորդ կամ հաճախորդի ներկայացրած ֆիզիկական անձ, ով Համակարգում անցնում է գրանցման համապատասխան գործընթաց:
- 1.6. Օգտագործողի գրանցման տվյալներ՝ օգտագործողի մուտքանուն (Էլ. փոստի հասցե), բջջային հեռախոսահամար, մեկանգամյա գաղտնաբառեր, անուն ազգանուն, ծննդյան ամսաթիվ, սոց. քարտ:
- 1.7. **Համակարգում օգտագործողի դեր-գրանցված օգտագործողին վերապահված իրավասություն:** Համակարգում ԻԱ/ԱԶ օգտագործողների համար առկա դերերն են՝

- **Առաջին կամ Երկրորդ ստորագրող**, որոնք իրավասու են հաստատել գործարքները, այդ թվում՝ տալ վճարման հանձնարարականներ, կատարել փոխանցումներ, ելքագրել հաշիվներից գումարներ, կնքել այլ գործարքներ, ներկայացնել հայտեր, ինչպես նաև կատարել Համակարգով նախատեսված ցանկացած այլ գործողություններ: Ընդ որում, եթե Համակարգում գրանցվում է մեկ օգտագործող Առաջին և երկրորդ ստորագրողի դերով, ապա վերջինս միանձնյա կարող է հաստատել գործարքներ, իսկ եթե Համակարգում գրանցվել են մեկից ավելի օգտագործողներ Առաջին և Երկրորդ ստորագրողի դերերով, ապա գործարքները պետք է հաստատվեն և Առաջին ստորագրողի կողմից, և Երկրորդ ստորագրողի կողմից:

- **Ստեղծող**, ով իրավասու չէ հաստատել գործարքներ, սակայն կարող է ստեղծել փաստաթղթեր Առաջին և Երկրորդ ստորագրողի կողմից հաստատելու նպատակով,

- **Դիտորդ**, ով իրավասու չէ հաստատել գործարքներ կամ ստեղծել փաստաթղթեր, սակայն կարող է դիտել գործարքներ, հաշիվները:

- 1.8. **Հաճախորդի նույնականացման տվյալներ**՝ Օգտագործողի գրանցման տվյալները, Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ (ֆիզիկական անձ (ՖԱ) հաճախորդի դեպքում, իսկ իրավաբանական անձ (ԻԱ) կամ անհատ ձեռնարկատեր (ԱԶ) հաճախորդի դեպքում ՀՎՀՀ) և Բանկի ԳՕ համակարգում Հաճախորդի քարտի համարը համապատասխան մասնաճյուղում:
- 1.9. **OTP**- Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ,՝ Անվտանգության կոդ - Համակարգ մուտք գործելու համար («AEB Online»), ինչպես նաև գործարքների Հաստատման համար՝ կախված գումարից և տեսակից («AEB Online» և «AEB Mobile»);
  - 1.9.1 .sms-ով- այն կազմված է 6 թվից,
  - 1.9.2. օգտագործողը ստանում է բանկից ստացված Տոկեն սարքով, այն կազմված է 7 թվից:

## Բաժին 2. Համակարգում Հաճախորդի գրանցում

2.1. Հաճախորդը Համակարգում գրանցվում է սույն բաժնով սահմանված ընթացակարգով.

2.1.1. Հաճախորդը ներկայացնում «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ Mobile Banking/Online Banking էլեկտրոնային համակարգերում գրանցման Հայտ:

2.1.2. Օգտագործողը Համակարգից օգտվելու նպատակով [www.aeb.am](http://www.aeb.am) կայքից ընտրում է AEB Online հղումը («AEB Online» համակարգի դեպքում), կամ ներբեռնում է «AEB Mobile» բջջային հավելվածը (AEB Mobile» համակարգի դեպքում):

2.1.3. AEB Online-ի էջից բացված պատուհանում Մուտք հղմամբ բացվող Մուտքանուն պատուհանում լրացվում է Հայտում նշված օգտագործողի էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ Գաղտնաբառ դաշտում լրացվում է՝ Բանկին տրամադրված էլ. փոստին ուղարկված ժամանակավոր գաղտնաբառը (ԻԱ/ԱԶ հաճախորդների համար), որից հետո Օգտագործողի գրանցման ավարտով վերջինս ստանում է Հաճախորդին մատուցվող ծառայություններին հասանելիություն:

2.1.4. «AEB Mobile» բջջային հավելվածը ներբեռնելուց հետո, ֆիզ. անձ հաճախորդը, գրանցվում է հավելվածում

2.1.4.1 կամ մոտենալով բանկի սպասարկող մասնաճյուղ լրացնելով Բանկին ներկայացված հայտի էլփոստը և բջջային հեռախոսի համարը, համակարգի ադմինիստրատորը նույնականացնելով հաճախորդին կցում է հաշիվները Օգտագործողին վերջինս ստանում է Հաճախորդին մատուցվող ծառայություններին հասանելիություն:

2.1.4.2.կամ անցնում է Կենսաչափական նույնականացում (ImID-ով՝ Mobile ID կամ կամ բանկի Կենսաչափական նույնականացմամբ )՝

- հաճախորդ լինելու դեպքում, հաջողված նույնականացում անցնելով, ստանում է ծառայություններին հասանելիություն,

- հաճախորդ չլինելու դեպքում հաջողված նույնականացում անցնելուց հետո, գրանցվում է որպես հաճախորդ և բացվում է բանկային հաշիվ ստանալով ծառայությունների հասանելիություն:

2.2 Երբ Օգտագործողը բանկից ստանում է ժամանակավոր գաղտնաբառ պետք է առաջին մուտքի ժամանակ փոխի այն:

### **Բաժին 3. Համակարգով առաջարկվող գործառնություններ.**

#### **3.1.Բանկային Հաշիվներ**

3.1.1. Հաշվի դիտում

3.1.2. Հաշվի բացում

3.1.3. Հաշվի համալրում

3.1.4. Հաշվից փոխանցումների կատարում

3.1.5. Հաշվից քաղվածքների ստացում

3.1.6. POS-ի քաղվածքների ստացում /միայն գործող գրանցված Pos ունեցող հաճախորդների համար/

3.1.7. Հաշվի վերաբերյալ տեղեկանքի ստացում

3.1.8. Հաշվից կանխիկացման հայտի ներկայացում

3.1.9 Խնայողական հաշվի բացում

#### **3.2. Փոխանցումներ**

3.2.1. «Հեշտ» փոխանցում (նշելով ստացողի հեռախոսահամարը կամ Էլ. փոստի հասցեն)(ՖԱ)

3.2.2. Փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև

3.2.3. Տարադրամի փոխանակում

3.2.4. Փոխանցումներ ՀՀ-ում, դրամային (այդ թվում բյուջե) և արտարժույթային հաշիվների միջև

3.2.5. Փոխանցում քարտին (բանկային և քարտային հաշվից (քարտից))

3.2.6. Միջազգային փոխանցումներ

3.2.7. Միջազգային փոխանցումներ քարտին /Visa direct , Money Send/

3.2.8. Անհաշիվ վճարային համակարգերից գումարի ստացում քարտային (ընթացիկ) հաշվին MyTransfer ծառայության միջոցով (ՖԱ)

3.2.9. ՀԷԲ փոխանցում (Բանկի մասնաճյուղերի միջև անհաշիվ փոխանցում) (ՖԱ)

3.2.10 Փոխանցում QR կոդով /ArcaQR/

#### **3.3 Վճարումներ**

3.3.1 Կոմունալ ( Նաև խմբային)

3.3.1.2 Էլեկտրականություն

3.3.1.3 Գազ (վարձավճար և սպասարկման վճար)

3.3.1.4 Ջուր (Վեղա ջուր, Ոռոգման ջուր վարձավճար/անդամավճար)

3.3.1.5 Հեռախոս ( Team քաղաքային)

3.3.1.6 Ինտերնետ (Team Hiline, Ucom, Rostelecom, Fnet, Fnet (սոր), Արփինետ, Homenet, VirusNet)

3.3.2 Բջջային հեռախոս (Team, Ucom, Viva)

3.3.2.1 Գույքահարկ (Տվյալ պահի դրությամբ և Ընթացիկ տարի)

#### **3.3.2 Այլ վճարումներ<sup>8</sup>**

3.3.2.2 ՃՈ տուգանքներ (ըստ Որոշման համարի և ըստ Համարանիշ և տեխ. անձնագրի)

3.3.2.3 Աղբահանություն /Երևան/

3.3.2.4 Ավտոկայանատեղի տուգանք/վճարում

3.3.2.5 Համատիրություններ

3.3.2.6 Դոմինոն /Ստրոյ Մաստեր, Արմատիս, Fnet, Դոմիսի/

3.3.2.7 ԴԱՀԿ

3.3.2.8 Օնլայն վճարումներ (Onex, Draive, 4u.am, Globing, Onex Հարկային վճար )

#### **3.4. Վճարային քարտեր**

3.4.1 Քարտային հաշվի դիտում

- 3.4.2 Քարտի կամ լրացուցիչ քարտի պատվիրում
- 3.4.3 Քարտի վերաթողարկում
- 3.4.4 Քարտի բլոկավորում/ապաբլոկավորում
- 3.4.5 Քարտի կանխկացվող գումարի/քանակի սահմանաչափերի փոփոխում
- 3.4.6 Քարտային հաշվի համալրում
- 3.4.7 Քարտից փոխանցումների կատարում,
- 3.4.8 Քարտի sms ծանուցների կարգավորումների կատարում
- 3.4.9 Քարտային հաշիվների քաղվածքների ստացում
- 3.4.10 Քարտային հաշվի վերաբերյալ տեղեկանքի ստացում
- 3.4.11 Քարտային հաշվից կանխիկացման հայտի ներկայացում
- 3.4.12 ArCa-ում քարտի մնացորդի դիտում
- 3.4.13 Քարտի փակման հայտ
- 3.4.14 Նոր ՊԻՆ կոդի ստացում /բանկոմատի միջոցով/
- 3.4.15 Պին կոդի փոփոխում
- 3.4.16 CVV-ի ստացում

### **3.5. Ավանդային հաշիվներ**

- 3.5.1 Ավանդային հաշիվների բացում
- 3.5.2 Ավանդային հաշիվների համալրումներ
- 3.5.3 Ավանդային հաշիվներին ներդրված ավանդի տոկոսների ստացում
- 3.5.4 Ավանդային հաշիվներին ներդրված ավանդի հետ վերադարձ
- 3.5.5 Ավանդային հաշիվների քաղվածքների ստացում
- 3.5.6 Ավանդի տոկոսի ստացման հաշվի փոփոխում

### **3.6. Վարկեր**

- 3.6.1 Վարկի հերթական/մայր գումարի մարում
- 3.6.2 Վարկի մասին տեղեկատվության ստացում
- 3.6.3 Վարկային հաշիվների քաղվածքների ստացում
- 3.6.4 Վարկային գծի սահմանաչափի նվազեցում
- 3.6.5 Օնլայն վարկի տրամադրում (ՖԱ)
- 3.6.6 AEB Guru դիջիթալ քարտերով վարկային գծի տրամադրում
- 3.6.7 AEB Guru Travel քարտերով վարկային գծի տրամադրում (ՖԱ)
- 3.6.8 ՀԷԲ այլ վարկի մարում (Վարկային կոդով կամ Պայմանագիր համարով)
- 3.6.9 Վարկային գծից գումարի տրամադրման դիմում հայտ (ԻԱ)
- 3.6.10 Ավանդի գրավով վարկային գծի տրամադրում (ՖԱ)

#### **3.8 Ներդրումներ**

- 3.8.1 Իմ ՀԷԲ պորտֆելը - Պարտատոմսեր

### **3.7. Այլ գործառնություններ**

- 3.7.1 Պարբերական փոխանցումների կատարում
- 3.7.2 Խմբերի ստեղծում կոմունալ վճարումների և ՀՀ-ում փոխանցումների համար
- 3.7.3 Կենսաթոշակային հաշվի քաղվածքների ստացում
- 3.7.4 Ձևանմուշների պահպանում, փաստաթղթերի կրկնօրինակում
- 3.7.5 ԱՊՊԱ պայմանագրի կնքման հայտ
- 3.7.6 Այլ բանկային քարտի կցում
- 3.7.7 Տեղեկանք հաշիվներով ստացված եկամուտներ վերաբերյալ

### **3.8. Բանկի հետ հաղորդակցում**

- 3.8.1 Բանկին նամակների, դիմումների, առաջարկների ուղարկում
- 3.8.2 Բանկից պատասխանների, հաղորդագրությունների, ծանուցումների ստացում
- 3.8.3 Նամակ Հայտ
- 3.8.4 Կապ բանկի հետ

## **Բաժին 4. Այլ պայմաններ և պահանջներ**

- 4.1. Համակարգը թույլատրում է 6 անհաջող մուտքի փորձ կատարել:  
Հինգից ավել անհաջող փորձ կատարելու դեպքում տվյալ օգտագործողի մուտքի իրավունքը ժամանակավոր բլոկավորվում է, 3 թույլից հետո կրկին ճիշտ գաղտնաբառ մուտքագրելու դեպքում կարող է մուտք լինել օգտագործողը, իսկ հաջորդաբար 6 անհաջող մուտքի դեպքում բլոկավորվում է:

- 4.2. Բանկն իրավասու է բլոկավորել օգտագործողի մուտքը՝ հաճախորդի չնույնականացվելու դեպքում, ինչպես նաև Հաճախորդի հետ կնքված բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանագրով, ընդհանուր պայմաններով սահմանված դեպքերում:
- 4.3. Հաճախորդն իրավասու է դիմելով բանկին բլոկավորվել օգտագործողի մուտքի իրավունքը համակարգ կամ փոփոխել օգտագործողներին:
- 4.4. Համակարգով գործառնությունների կատարման համար պարտադիր են Հաճախորդի կողմից Բանկի հետ կնքված բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանագրի (եթե կնքված չէ, ապա Հաճախորդը պարտավոր է անհապաղ կնքել այն կամ Համակարգում գրանցվելու պահից Բանկում գործող այդ պայմանագիրը համարվում է կնքված Բանկի և հաճախորդի միջև), Ընդհանուր Պայմանների և Սակագների պահանջների կատարումը և պահպանումը, ինչպես նաև Հաճախորդի նույնականացումը:
- 4.5. Հաճախորդի նույնականացումը Համակարգում հաճախորդին որպես Օգտագործող գրանցումն է, որից հետո հաճախորդը ստանում է համակարգն օգտագործողի մուտքանուն և Ժամանակավոր գաղտնաբառ, որոնց օգտագործմամբ Հաճախորդը համարվում է նույնականացված:
- 4.6. Հաճախորդի նույնականացումից հետո Համակարգով թույլատրվող ցանկացած գործողության և/կամ գործառնության/գործարքի կատարումը համարվում է Հաճախորդի կողմից և/կամ նրա հանձնարարականով փաստացի կատարված գործարք, իսկ դրա վերաբերյալ համակարգում ձևավորված տեղեկատվությունը ստանում է հաճախորդի կողմից ստորագրված գրավոր փաստաթղթային գործարքին համարժեք իրավաբանական ուժ և նշանակություն:
- 4.7. Եթե Օգտագործողը անմիջականորեն Հաճախորդը չէ, ապա այդ Օգտագործողը համարվում է Հաճախորդի լիազոր ներկայացուցիչ Հաճախորդի գրանցման Հայտում նրան վերապահված իրավասության դերով և վերջինիս կատարած գործառնությունները համարվում են Հաճախորդի կողմից կատարված գործառնություններ (այդ իրավասությունը Հաճախորդը կարող է դադարեցնել դրա մասին գրավոր հայտնելով Բանկին):
- 4.8. Հաճախորդը(օգտագործողը) պարտավոր է գաղտնի պահել գաղտնաբառերը, չհայտնել դրանք երրորդ անձանց, չընձեռել հնարավորություն, որ դրանք հասանելի դառնան այլ անձանց և ձեռնարկել անվտանգության հնարավոր բոլոր միջոցները, իսկ ցանկացած արտահոսքի կամ նման վտանգի դեպքում փոփոխել համակարգում տվյալ գաղտնաբառերը, կապվելով բանկի հետ կասեցնել դրանց օգտագործմամբ և կիրառմամբ Հաճախորդի նույնականացումը:
- 4.9. Հաճախորդի նույնականացումը հավաստելու համար Համակարգը կարող է առաջադրել անվտանգության լրացուցիչ միջոցներ (գրանցված հեռախոսահամարին SMS-ով մեկանգամյա գաղտնաբառի ուղարկում, և/կամ այլ), որոնց կիրառմամբ Համակարգ մուտք գործողի և/կամ գործարքներ կատարողի և Հաճախորդի նույնականացումը համարվում է հավաստված:
- 4.10. Բանկն իրավունք ունի Համակարգով գործառնությունների կատարման համար Հաճախորդից գանձել Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարները, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Համակարգի սպասարկման հետ կապված այլ վճարները:
- 4.11. Ամփոփագիրը Հաճախորդի պահանջով անվճար տրամադրվում է թղթային եղանակով, ինչպես նաև հասանելի է Բանկի գործունեության բոլոր վայրերում (Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր):
- 4.12. Համակարգի օգտագործման այլ պայմաններին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքէջից:
- 4.13. Ամփոփագրի հրապարակման ամսաթվից հետո Ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել, ինչը Հաճախորդը կարող է պարզել կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:

| <b>VI. Հաշիվների հեռակառավարում**</b>  |  |   |
|--|--|---|
| <b>Ա.ՅԵԲ Mobile/ ՅԵԲ Online համակարգով (Այսուհետև Համակարգ) տրամադրվող ծառայությունների սակագներ<sup>1</sup></b>                                   | <b>Ռեզիդենտ</b>  | <b>Ոչ ռեզիդենտ և ոչ ՀՀ քաղաքացի</b>     |
| 1. ՅԵԲ Mobile Հավելվածի ներբեռնում և սպասարկում /ՖԱ/   | Անվճար   |   |
| 2. Համակարգի գաղտնաբառի փոփոխություն   | Անվճար   |   |
| 3. Նոր գաղտնաբառի ուղարկում Էլ. փոստի միջոցով  | Անվճար   |   |
| 4. ՅԵԲ Mobile / ՅԵԲ Online համակարգի մուտքի ապաբլոկավորում   | Անվճար   |   |
| 5. Փոխանցում քարտին*** սակագները տես <sup>2</sup>  |  |   |
| 6. Պլաստիկ քարտերով գործարքներ <sup>2</sup> ծառայությունների արտոնյալ սակագներ <sup>1</sup>  |  |   |
| 6.1 Զարտային հաշվից ՀՀ բանկերի հաճախորդների օգտին փոխանցումներ <sup>5</sup>  | Անվճար   |   |
| 6.2 Զարտի բլոկավորում  | Անվճար   |   |
| 6.3 Համակարգով բլոկավորված քարտի ապաբլոկավորում  | Անվճար   |   |
| 7.Բանկային/քարտային հաշիվներից ԱՄՆ դոլարով և ԵՎՐՈ փոխանցումներ ՀՀ տարածքում այլ բանկեր /արտոնյալ սակագին/  | 0.1% նվազագույնը 1000 դրամ, առավելագույնը 10000 դրամ   |   |
| 7.1 Բանկային/քարտային հաշիվներից ԱՄՆ դոլարով, ԵՎՐՈ և ՌՈՒԲ ՀՀ տարածքում ներբանկային փոխանցումներ /արտոնյալ սակագին/                                 | Անվճար   |   |
| 8. ՅԵԲ Mobile համակարգ տրամադրելիս բանկային դրամային ընթացիկ հաշիվ չունեցող հաճախորդի դրամային, հաշվի բացում /արտոնյալ սակագին/                    | Անվճար   |   |
| 8.1 ՅԵԲ Mobile համակարգով կենսաչափական նույնականացմամբ հաճախորդ գրանցվելիս բանկային դրամային ընթացիկ հաշիվի բացում /արտոնյալ սակագին/              | Անվճար   |   |
| 8.2 ՅԵԲ Mobile համակարգով ՖԱ-ի հաճախորդի համար բանկային ընթացիկ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌՈՒԲԼի հաշիվների բացում /արտոնյալ սակագին/              | Անվճար   |   |
| 8.3 ՅԵԲ Mobile համակարգով ՖԱ-ի հաճախորդմասնակցի համար ինայողայան բանկային ՀՀ դրամ հաշիվի բացում /արտոնյալ սակագին/                                 | Անվճար<br>/Տես Տեղեկատվական Ամփոփագրում <sup>10/</sup> |   |
| 9.ՅԵԲ Mobile / ՅԵԲ Online համակարգով ֆիզիկական անձանց տրամադրվող GURU և VISA GURU TRAVEL քարտերով վարկային գծեր                                    | Տես Տեղեկատվական Ամփոփագրում <sup>9</sup>              |   |
| 10. ՅԵԲ Mobile / ՅԵԲ Online համակարգով ֆիզիկական անձանց տրամադրվող "Օնլայն վարկ"   | Տես Տեղեկատվական Ամփոփագրում <sup>6</sup>              |   |
| 11. ՀԷԲ Փոխանցում /անհաշիվ փոխանցում/ <sup>7</sup>   | 0.6% նվազագույնը 200 դրամ                              |   |
| <b>12. Սպասարկման վճար****</b>   |  |   |
| 12.1 ԻԱ/ԱԶ հաճախորդների համար "ՅԵԲ Online "Համակարգի մուտք՝ առանց անվտանգության կոդի <sup>4</sup>  | 1000 դրամ ամսական                                      | 2000 դրամ ամսական                       |
| 12.2 ԻԱ/ԱԶ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացումը սարքի միջոցով <sup>3</sup>                                 | միանվագ՝ 10000 դրամ +1000 դրամ ամսական                 | միանվագ՝ 30000 դրամ +2000 դրամ ամսական  |
| 12.3 ԻԱ/ԱԶ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացումը SMS հաղորդագրության միջոցով (առանց սարքի) <sup>4</sup>     | 2000 դրամ ամսական                                      | 4000 դրամ ամսական                       |
| 12.4 ԻԱ/ԱԶ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացման հնարավորություն և՛ SMS-ի, և՛ սարքի միջոցով <sup>3 և 4</sup> | միանվագ՝ 10000 դրամ + 2000 դրամ ամսական                | միանվագ՝ 30000 դրամ + 4000 դրամ ամսական |

|  |                     |                     |
|--|---------------------|---------------------|
| 13. ԻԱ/ԱԶ յուրաքանչյուր լրացուցիչ սարքով անվտանգության կողի ստացման համար վճար   | միանվագ՝ 7500 դրամ  | միանվագ՝ 20000 դրամ |
| 14. ԻԱ/ԱԶ/ՖԱ Սարքի կորստի (վնասվածքի դեպքում) փոխարինում*  | միանվագ՝ 10000 դրամ | միանվագ՝ 30000 դրամ |
| 15. Իրավաբանական անձ/ ԱԶ/նոտար հաճախորդի կողմից ՀՀ դրամով անկանխիկ փոխանցումներ /վճարումներ/ Հայաստանի Հանրապետության տարածքում և Բանկի համակարգում /արտոնյալ սակագին/ | Անվճար              |                     |
| 16. ՀՀ դրամով անկանխիկ կատարված գույքահարկի և աղբահանության վճարումներ / ԻԱ և ՖԱ հաճախորդների համար/   |                     |                     |
| ա/ մինչև 100,000 ՀՀ դրամ /արտոնյալ սակագին/  | 100 ՀՀ դրամ         |                     |
| բ/ 100,001-ից 250,000 ՀՀ դրամ  | 500 ՀՀ դրամ         |                     |
| գ/ 250,001-ից 500,000 ՀՀ դրամ  | 1,000 ՀՀ դրամ       |                     |
| դ/ 500,001-ից 1,000,000 ՀՀ դրամ  | 1,500 ՀՀ դրամ       |                     |
| ե/ 1,000,001-ից 3,000,000 ՀՀ դրամ  | 3,000 ՀՀ դրամ       |                     |
| զ/ 3,000,001-ից 5,000,000 ՀՀ դրամ  | 5,000 ՀՀ դրամ       |                     |
| է/ 5,000,001 և ավելի ՀՀ դրամ   | 7,000 ՀՀ դրամ       |                     |

|      |  |
|------|--|
| *    | Սակագինը ներառում է ԱԱՀ-ն  |
| **   | «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ AEB Mobile/AEB Online էլեկտրոնային համակարգերում գրանցման հայտ ներկայացնելու դեպքում, բանկային դրամային ընթացիկ հաշիվ չունեցող ֆիզիկական անձ հաճախորդների համար վերոնշյալ հաշվի բացումը սահմանվում է անվճար:   |
| ***  | բացառությամբ կենսաթոշակային և սոցալական այլ վճարների համար նախատեսված գումարների քարտերի   |
| **** | ԻԱ, ԱԶ հաճախորդների սպասարկման ամսական գումար գանձվում է մեկ հատ, անկախ օգտագործողների քանակից:  |
| 1    | Բանկի սակագներին ծանոթացեք «Վճարային քարտերի և քարտային հաշվի տեղեկատվական Ամփոփագրում»: Բոլոր մյուս սակագները գործում են առանց արտոնյալ պայմանների:   |
| 2    | Պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման ամբողջական սակագներին ծանոթանալու համար անցեք «Վճարային քարտերի և քարտային հաշվի տեղեկատվական Ամփոփագիր»:  |
| 3    | ա/ հաճախորդին մինչև հաշվետու ամսվա 25 սարք/եր/ի տրամադրման դեպքում վճարը գանձվում է նույն ամսվա ընթացքում մեկ ամսվա համար, իսկ հաշվետու ամսվա 25-ին կամ ավելի ուշ սարք/եր/ի տրամադրման դեպքում՝ հաջորդ ամսվա ընթացքում մեկ ամսվա համար:<br>բ/մինչև հաշվետու ամսվա 5-րդ աշխատանքային օրը սարք/եր/ի հանձման դեպքում հաշվետու ամսվա համար չի գանձվում սակագին:                    |
| 4    | ա/Ծառայությունից օգտվելու հայտը մինչև հաշվետու ամսվա 25-ը ստորագրելու դեպքում ամսական վճարը գանձվում է նույն ամսվա ընթացքում մեկ ամսվա համար, իսկ հաշվետու ամսվա 25-ին կամ ավելի ուշ ստորագրելու դեպքում՝ հաջորդ ամսվա ընթացքում մեկ ամսվա համար:<br>բ/Մինչև հաշվետու ամսվա 5-րդ աշխատանքային օրը ծառայությունից հրաժարվելու դեպքում հաշվետու ամսվա համար սակագին չի գանձվում: |
| 5    | Բացառությամբ MasterCard ARMEC's GOLD, MasterCard ARMEC's STANDARD, և VISA GURU / VISA GURU TRAVEL ի քարտատեսակների: Համաձայն «Վճարային քարտերի և քարտային հաշվի Տեղեկատվական Ամփոփագրի»:   |
| 6    | AEB Mobile / AEB Online համակարգով ֆիզիկական անձանց տրամադրվող "Օնլայն վարկ" սակագներին ծանոթացեք «Տեղեկատվական Ամփոփագրի ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի էջ39»  |
| 7    | «ՀԷԲ ՓՈՒՍԱՆՑՈՒՄՆԵՐ» ներքին արագ դրամական փոխանցումների համակարգը, որը հնարավորություն կտա «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ մասնաճյուղերի ցանցում իրականացնել ՀՀ դրամով և USD, EUR, RUR արտարժույթներով փոխանցումներ՝ առանց լրացուցիչ տվյալների ներկայացման և հաճախորդից կանխիկացման   |

|    |   |
|----|---|
|    | սակագնի գանձման:  |
| 8  | Այլ վճարումների սակագներն ըստ Իզի Փեյի սահմանված սակագների  |
| 9  | AEB Mobile / AEB Online համակարգով ֆիզիկական անձանց տրամադրվող "Օսլայն վարկ" սակագներին ծանոթացեք "Տեղեկատվական Ամփոփագիր Պլաստիկ քարտերով տրամադրվող վարկային գծերի" (VISA GURU / VISA GURU TRAVEL վարկային գիծ) ամփոփագրում |
| 10 | "Տեղեկատվական Ամփոփագիր խնայողական հաշվի բացման"  |